«Հաստատում եմ»
ՀՀ ԿԳՄՄՆ «Երևանի հենաշարժական համակարգի
խախտումներ ունեցող երեխաների հ.17 հատուկ դպրոց»ՊՈԱԿ-ի
Տնօրենի պ/կ՝ _____ Լ. Մանվելյան
« 29 » 08 2025թ.

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ
Մ/Մ ՂԵԿԱՎԱՐԻ
2025-2026 ուստարվա
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

Համեստ Շավարշի Փիրումյան՝ _____

Տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալ՝

_____ Լ. Մանվելյան

Հումանիտար առարկաների մ/մ տարեկան աշխատանքային պլան

Առարկայական մասնախմբի ընդհանուր գործառույթները

- Հումանիտար առարկաների մեթոդական միավորումը քննարկում է հանրակրթական առարկայական չափորոշիչներին համապատասխան ուսումնական ծրագրերի, ուսումնական պլանների նախագծերը, ուսումնասիրում է տարբեր մեթոդական ձեռնարկներ և դրանց քննարկումների վերաբերյալ ուսուցիչներին տալիս երաշխավորություն.
- քննարկում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողի անհատական ուսուցման պլանը.
- ուսումնասիրում, ընդհանրացնում է մանկավարժական առաջավոր փորձը և այն ներդնում գործնական աշխատանքում.
- նպաստում է ուսուցիչների որակավորման բարձրացմանը.
- սկսնակ ուսուցիչներին նախապատրաստում է ատեստավորման.
- կազմակերպում է մասնագիտական և մանկավարժական-մեթոդական խորհրդակցություններ, խորհրդատվություններ.
- ուսուցիչներին հաղորդակից է դարձնում մանկավարժության նորագույն նվաճումներին, կազմակերպում է սեմինարներ, մանկավարժական մեթոդական ընթերցումներ.
- մանկավարժական խորհրդի քննարկմանն է ներկայացնում ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչի ժամերի տնօրինման վերաբերյալ առաջարկություն.
- կատարում է ուսումնական պլանով սահմանված դասաժամերի նախնական բաշխում և առաջարկություն է ներկայացնում դպրոցի տնօրինությանը.
- կազմակերպում է դպրոցական միջոցառումներ, բաց դասեր և էքսկուրսիաներ:

I Ծրագրեր

Հ/Հ	*Աշխատանքի բովանդակությունը*	*Ժամկետը*	*Կատարող*
1	Առարկայական ծրագրերի վերանայում և լրամշակում	Օգոստոս-	Առարկայական մ/մ, մ/մ ղեկավար, փոխտնօրեն
2	Առարկայական ծրագրերի, թեմատիկ պլանների քննարկում և հաստատում	Օգոստոս-սեպտեմբեր	Առարկայական մ/մ
3	Թեմատիկ պլանները կազմելիս առաջնորդվել ԿԳՄՄՆ-ի 14.08.2024թ.-ի N 64-Ն հրամանով նախատեսված փոփոխություններով. ԴԿՏՀ-ում թեմատիկ պլանները ներբեռնել նոր ձևաչափով (օրվա դասի նպատակ, վերջնարդյունք, թեմայի նպատակ, թեմայի վերջնարդյունք): Գնահատումը ևս իրականացնել նոր ձևաչափով	Օգոստոս-սեպտեմբեր	Առարկայական մ/մ
4	Ծանոթացում հումանիտար մ/մ-ում ընդգրկված առարկաների առարկայական պետական չափորոշիչին. առարկայական պետական ծրագրերի չափորոշիչների	Օգոստոս-սեպտեմբեր	Առարկայական մ/մ

	հարմարեցում կրթական աջակցության 3-րդ և 4-րդ աստիճանի կարիք ունեցող սովորողների կարողություններին		
5	Ծանոթացում օգոստոսյան խորհրդակցության ցուցումներին	Օգոստոս-սեպտեմբեր	Մ/մ ղեկավար
6	Ուսումնական պլանի դպրոցական և անհատական բաղադրիչների ժամերի տնօրինման վերաբերյալ առաջարկության ներկայացում	Օգոստոս	Առարկայական մ/մ, մ/մ ղեկավար
7	Ուսումնական պլանով սահմանված դասաժամերի նախնական բաշխում և առաջարկության ներկայացում տնօրինությանը	Օգոստոս	Առարկայական մ/մ, մ/մ ղեկավար
8	Ուսումնական նախագծերի քանակի որոշում, թեմաների ներկայացում և հաստատում	Սեպտեմբեր, դեկտեմբեր	Առարկայական մ/մ, մ/մ ղեկավար, տնօրեն
9	Աշխատանքային պլանների կազմում և հաստատում	Օգոստոս-սեպտեմբեր	Առարկայական մ/մ
10	1-ին կիսամյակում ծրագրերի կատարման ստուգում	Դեկտեմբեր, հունվար	Առարկայական մ/մ, մ/մ ղեկավար, փոխտնօրեն
11	Տարեկան ծրագրերի կատարման ստուգում	Հունիս	Առարկայական մ/մ, մ/մ ղեկավար, փոխտնօրեն
12	Արդյունքների ամփոփում	Հունիս	Առարկայական մ/մ, մ/մ ղեկավար, փոխտնօրեն
13	Թեմատիկ պլանի վերանայում	Հունիս	Առարկայական մ/մ, մ/մ ղեկավար, փոխտնօրեն

II Դասալսումներ և բաց դասեր

Հ/Հ	*Աշխատանքի բովանդակությունը*	*Ժամկետը*	*Կատարող*
1	Անհատական դասալսումներ	Տարվա ընթացքում	Մ/մ ղեկավար, փոխտնօրեն, տնօրեն
2	Մայրենի առարկայի շրջանակներում դասալսումներ 5-9 դասարաններում	Տարվա ընթացքում	Մ/մ ղեկավար
3	Հայրենագիտություն առարկայի շրջանակներում դասալսումներ 5-9 դասարաններում	Տարվա ընթացքում	Մ/մ ղեկավար
4	Դասալսումներ սկսնակ ուսուցիչների մոտ	Տարվա ընթացքում	Մ/մ ղեկավար
5	Դասալսումներ՝ կապված դասավանդման մեթոդների օգտագործման հետ	Տարվա ընթացքում	Մ/մ ղեկավար
6	Դասալսումներ փորձառու ուսուցիչների մոտ՝ փորձի փոխանակման նպատակով	Տարվա ընթացքում	Մ/մ ղեկավար

7	Փոխադարձ դասալսումներ (համապատասխան գրանցումով)	Տարվա ընթացքում	Առարկայական մ/մ
8	Բոլոր դասալսումների քննարկումներ մ/մ անդամների և տնօրինության կողմից	Տարվա ընթացքում	Մ/մ ղեկավար, փոխտնօրեն, տնօրեն

III Մանկավարժական աշխատանքների քննարկում

Հ/Հ	*Աշխատանքի բովանդակությունը*	*Ժամկետը*	*Կատարող*
1	Համացանցի տարբեր կայքերի նյութերի ուսումնասիրություն	Սեպտեմբեր	Առարկայական մ/մ, մ/մ ղեկավար
2	Անհատական խորհրդատվություն հումանիտար առարկաների դասավանդման խնդիրների վերաբերյալ	Տարվա ընթացքում	Մ/մ ղեկավար
3	Հատուկ կարիքով սովորողների ուսումնառության և դաստիարակության դժվարությունները	Տարվա ընթացքում	Առարկայական մ/մ, մ/մ ղեկավար
4	Ուսուցչի էթիկա	Տարվա ընթացքում	Առարկայական մ/մ, մ/մ ղեկավար
5	Դասավանդման նոր մեթոդների քննարկում և կիրառում	Նոյեմբեր	Մ/մ ղեկավար
6	Սովորողների հետ անհատական աշխատանքի կազմակերպում, անհատական աշխատանքի ձևերի ընտրություն, ԱՈՒՊ-ների վարում	Տարվա ընթացքում	Առարկայական մ/մ, մ/մ ղեկավար
7	Նոր չափորոշչի հարմարեցումը մեր աշակերտների կարողություններին և հմտություններին	Տարվա ընթացքում	Առարկայական մ/մ, մ/մ ղեկավար

IV Ուսումնասիրություններ և աշխատանք մեթոդական անկյունում

Հ/Հ	*Աշխատանքի բովանդակությունը*	*Ժամկետը*	*Կատարող*
1	Գիտելիքների, կարողությունների և հմտությունների ապահովումը հումանիտար առարկաների ժամերին	Հոկտեմբեր	Մ/մ ղեկավար
2	Գիտելիքները գործնականում օգտագործելու կարողությունների և հմտությունների ապահովումը հումանիտար առարկաների ժամերին	Տարվա ընթացքում	Առարկայական մ/մ, մ/մ ղեկավար
3	Մեթոդական նորությունների ուսումնասիրություն	Տարվա ընթացքում	Առարկայական մ/մ, մ/մ ղեկավար
4	Մեթոդական, մանկավարժական, մասնագիտական զեկույցների կազմակերպում	Տարվա ընթացքում	Առարկայական մ/մ, մ/մ ղեկավար

5	Մ/մ անդամների դասավանդած դասարաններում կիսամյակային և տարեվերջյան արդյունքների քննարկում և ամփոփում	Դեկտեմբեր, Հունիս	Առարկայական մ/մ, մ/մ ղեկավար
6	Տնօրինության հետ ԱՈՒԴ-ի հետ կապված հարցերի քննարկում	Հունիս	Առարկայական մ/մ, մ/մ ղեկավար փոխտնօրեն, տնօրեն
7	Մատենավարության ստուգում	Տարվա ընթացքում	Մ/մ ղեկավար փոխտնօրեն
8	Ծրագրերի կատարողականի ստուգում	Մայիս	Մ/մ ղեկավար փոխտնօրեն
9	Մատյանի գրանցումների և թեմատիկ պլանի համապատասխանության ստուգում	Յուրաքանչյուր ամիս	Մ/մ ղեկավար, փոխտնօրեն
10	120 և ավելի ժամ և ավել բացակայած աշակերտների ցուցակի կազմում (առարկայի կտրվածքով)	Մայիս	Առարկայական մ/մ, մ/մ ղեկավար

V Միջոցառումներ և էքսկուրսիաներ

Հ/Հ	*Միջոցառումների և էքսկուրսիաների անվանում*	*Ժամկետը*
1	Խաղ-մրցույթների անցկացում	Հոկտեմբեր
2	Երևանի ըոնին նվիրված միջոցառում	Հոկտեմբեր
3	«Ոսկե աշուն» խորագրով միջոցառում	Նոյեմբեր
4	«Ամանորյա հրաշք» խորագրով միջոցառում	Դեկտեմբեր
5	Դաս-վիկտորինա՝ Հովհաննես Թումանյան	Փետրվար
6	Մայրենիի օր	Փետրվար
7	Ներկայացումների դիտում	Մարտ
8	Հեքիաթի ընթերցումներ	Նոյեմբեր, ապրիլ
9	Հուշ-ցերեկույթ նվիրված ցեղասպանության զոհերի հիշատակին	Ապրիլ
10	Էքսկուրսիաների կազմակերպում	Հոկտեմբեր, ապրիլ
11	Վերջին դաս	Մայիս

VI Զննական միջոցների պատրաստում, կաբինետների ձևավորում

Զննական միջոցների պատրաստում ըստ թեմաների և դասարանների
Վահանակների և ալբոմների պատրաստում
Դասասենյակների ձևավորում
Մեթոդական հավաքածուի ստեղծում (պաստառներ, դիդակտիկ նյութեր)

Հումանիտար առարկաների մասնախմբի ղեկավար՝ Հ. Փիրումյան